Տարսայիճ մեծ եւ Մինախաթունի թոռը, որոնցից գութ եւ խնամք է վայելել Եսային։

Զարմանալի է, որ յիշատակարանի մէջ չեն յիշուած դպրոցի բուն տէրերը՝ Խաղբակեանները եւ թուագրուած է միայն Օրբէլեան իշխանների անունով. ենթադրել, թէ Եսային հեռացել էր Գլաձորից եւ բնակուել Օրբէլեանների իշխանութեան մէջ, կարելի չէ. քանի որ հետեւեալ տարիների յիշատակարաններից հակառակ փաստեր կը տեսնենք։ Այդ հանգամանքը կարելի է միայն նորանով բացատրել, որ Եսային կամեցել է երախտագիտական յատուկ յիշատակ թողնել միայն նրանց անունով. Գլաձորի անուան բացակայութիւնը և «ի գաւառիս Սիւնեաց» արտայայտութիւնն այդ կողմից առանձին նշանակութիւն չունի. Գլաձորն էլ ամբողջ Վայոց ձորով Սիւնեաց մեծ նահանգի մաս էր, մանաւանդ որ «ի նեղ և յանձուկ աւթեվանիս» իւր մշտական բնակավայրն է ակնարկում։

«Ի վանս Գլաձոր մօտ ի մեծ վարժապ(ետ)ն Եսայի» 1325 թուին «յամսեանն հոկտեմբերի» գրուած է Յովհաննէս Երզնկացու լատիներէնից թարգմանած Թովմա Ագուինացու Եօթն Խորհրդոց գիրքը. գրուած է Թորոս Տարօնեցու ձեռքով։ Առաջին թերթերը գրուած են մի անյայտ գրչի կողմից։ Ստացողն է «հեղահոգի վարդապետն Սարգիս . . . , որ եռափափաք սրտիւ ետ գրել զգիրքս իմաստասիրաց. և սա խոկայ և բաղձայ ի տուէ և ի գիշերի արհեստից և մակացութեա. և իմաստասիրաց արանց» (պատկ. 224. Յաւել. Բ. 84)(*)։

Տփխիս ծնուած Առաքել վարդապետ Հաղբատեցին, Խոցադեղ և Խաղուդէ ամուսինների որդին, 1327 թուին Դաւիթ Գետակեցուն՝ «կուսակրօն քահանայի,



Պատկեր 217.

իմաստուն գրչի և քաջ քարտուղարի» գրել է տալիս մի Աստուածաշունչ, որ ծաղկազարդում է դարձեալ Թորոս Տարօնեցին. ընդարձակ յիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագրի գրութեան սկիզբը եղել «ի թվիս ՉՀԶ (= 1327) ի յամսեանն մայիսի ի յերեքշաբաթի՝ տօնի Երեման Խաչին», Աղբերց կամ Գլաձորի վանքում. «և եղև աւարտ սմին ի սկսեալ նոր

(*) Ձեռագիրը գտնւում էր Վաղարշապատի եկեղեցում, այժմ մատենադարանում մեր ձեռքով յանձնուած. կաշէպատ, հասարակ կազմով 24½ × 19½ × 5½ սմ., մագաղաթ՝ 25 × 19 սմ., բոլորգիր, երկսիւն, իւրաքանչիւրը 20 × 6½ ներքևի ծանօթութիւնների հետ։ Կան և յետին ժամանակի շատ յիշատակարաններ։

(*) Ձեռ. Էջմ. № 505/560 (Կար. 493) կաշէպատ կազմով, թուղթ, 15,7 × 11,7 սմ., բոլորգիր, 13 × 8½ սմ., 205 թերթ։ Յիշատակարանի առաջին մասը թարգմանիչ Յովհաննէս Երզնկացու շարադրածն է. թարգմանութիւնը կատարուած է ՉՀ (= 1321) թուին «ի դուռն Գործորու ընդ հովանեաւ սր. Աստծնիս»։